ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 561-Ա/2 19 մայիսի, 2017 թ.

«ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «AREAL» ԳԾԱՅԻՆ ԱՐԱԳԱՑՈՒՑՉԻ ՎՐԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա հետազոտությունների իրականացման նպատակով գիտական թեմաների հայտերի գնահատման համար ստեղծել մասնագիտական փորձագիտական խորհուրդ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳ նախարարի
«19» մայիսի 2017 թ.
N 561-Ա/2 հրամանի

Մասնագիտական փորձագիտական խորհուրդ

	ազգանուն անուն հայրանուն	գիտական աստիճան	աշխատանքի վայր, պաշտոն
1.	Հարությունյան Սամվել Գառնիկի, նախագահ	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե, նախագահ,
2.	Գասպարյան Վարդան Կառլենի	կենսաբանական գիտությունների թեկնածու	ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ, Բժշկական կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ,
3.	Մարկոսյան Միեր Վարդգեսի	տեխնիկական գիտությունների դոկտոր	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կառավարման համակարգերի ամբիոնի վարիչ,
4.	Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր	Երևանի պետական համալսարան, Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան,
5.	Չավուշյան-Պապյան Վերգինե Անդրանիկի	կենսաբանական գիտությունների դոկտոր	ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Նյարդաներզատական փոխհարաբերությունների լաբորատորիայի վարիչ,
6.	Վարդապետյան Հրաչիկ Ռաֆայելի	կենսաբանական գիտությունների դոկտոր	Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Բժշկական կենսաքիմիայի և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ,
7.	Ցականով Վասիլի Մկրտչի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր	«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ, տնօրեն: